—Եւ դառնանք, նստինք մեր թախտի վրէն։

Ու սկսեցին խեր ու խերիաթ էնել ու պատարագ էնել. պատարագն որ էրեցին պրծան, հրեշտակներ սրով, թրով իջան Սենեքերիմի ասքարի մէջ. ու ջարդեցին, ու սպանեցին, ու կոտորեցին։

Մնաց Սենեքերիմ մինակ. ու հեծաւ մեծ դևէն ու փախաւ. փախաւ ու ճամբախ ըսեց.—Ով ջոջ կուռք, Ասլիմելիք քըզի մատաղ։

Ու էկաւ, իջաւ, ուր թախտին նստաւ։

Ու խանչեց ուր ժողովուրդ, առաւ էկաւ ու ըսեց.—Բերէք մէկ-մէկ տղայ ջոջ կռքին մատաղ էնինք։

Վաղիր, վաքիլ, սինոդնիր ըսեցին.—Ըսօր մըր[1]) օր չէ, ըրա մըր՝ շաբաթ օր է, պդի շաբաթ օր մատաղ էնինք։

Մնաց չուրի գիշեր. մնաց չուրի գիշեր՝ մեր Սանասարն ու Ասլիմելիք խանչեց, տարաւ ուր կուշտ. ըսեց,—Ո՛րտի. ձըզի մէկ խուրջին ոսկի վերցէք ու փախէք. ձըզի մատաղ կ'էնայ, փախէք։

Առան ու փախան. փախան չուրի լուսցաւ. լուսն[2]) օր բացուաւ, գացին Երուսաղէմ։

Գացին Երուսաղէմայ թագաւորին գլուխ իջուցին. թամանդայ էղան ու կայնան առէջ։

Ու թագաւոր հարցուց ըդոնց թէ՝—Ի՞նչ պդի ձըզի։

Դարձան տղեկներն, ըսեցին.—Թագաւոր, վերի դէն Աստուած խաստ էնք էրի, ներքի դէն քըզի. մըզի պահիս, պահպանիս, եդև [3]) անցման Աստուած իրարուց չամչըցու։

---

[1]) Ն ձայնաւորը շատ բառերում ը է դառնում, օր. մըր, ձըր, վըր (վրայ), կըղտոտել, չէնք (չէնք), ըղունգ։

[2]) Ոյ երկբարբառը բառի մէջ միշտ ու է դառնում. օր. լուս, քուր, ճկութ, անուշ, բուն (բոյն)։

[3]) Նախադրութիւնները շատ անգամ գրաբարի նման են գրըւում. օր. եդև անցման, կիգան յառէջ ձըզի, Աստուած խրտ քըզի էղի, տղէն գնաց մըչ քաղքին ժուռ գալու, վըր իմ գլխուն, վըր իմ էրեսին և այլն։